ՀՐԱՆՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Մարտնչող Արցախը 1917-2000 թթ., *գիրք Բ (1923-1985), Զանգակ – 97 հրատարակչություն, Երևան, 2005, 280 էջ:*

Հայոց նորագույն պատմության մեջ արցախահայության ազատագրական պայքարը մնայուն տեղ ունի: Դրա պատմության մի շրջափուլի վերլուծությանն է նվիրված Հ. Աբրահամյանի «Մարտնչող Արցախը» շարքի երկրորդ գիրքը: Այն ընդգրկում է Արցախի 1923-1985 թթ. պատմությունը: Ունի աղբյուրագիտական հարուստ հենք և փաստալից է:

Ներածությունից, երեք գլուխներից, ամփոփումից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից բաղկացած հատվածում հանգամանալի քննվել են Արցախի պատմության ավելի քան 60-ամյա ժամանակահատվածի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքի հիմնահարցերը:

Աշխատության գիտական նորույթն առաջին անգամ Արցախի 1923-1985 թթ. Ամբողջական պատմության հետազոտումն է: Փաստական հարուստ նյութի օգտագործմամբ Հ. Աբրահամյանն դիտարկում է մի շարք խնդիրներ, որոնք լրացնում են Արցախի այդ շրջանի պատմության «սպիտակ էջերը» և ամբողջացնում երկրամասում կատարված իրադարձությունների շղթան:

Գրախոսվող աշխատության առաջին գլուխը նվիրված է ԼՂԻՄ-ի 1920-1930-ական թվականների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքին: Հեղինակը փաստական հարուստ նյութի հիման վրա մանրամասն վերհանում է Արցախի այդ շրջանի գյուղատնտեսության, արդյունաբերության, հոգևոր ու մշակութային ոլորտների և հասարակական-քաղաքական կյանքի հետ առնչվող հարցերը: Նա միևնույն ժամանակ փաստարկում է, թե մարզում ինչպես էին ոտնահարվում հայ մարդու իրավունքները:

Չնայած դրան, ինչպես ցույց է տվել Հ. Աբրահամյանը, արցախցիները, հաղթահարելով մարզի առջև ծառացած դժվարությունները, ստեղծեցին արդյունաբերություն, վերակառուցեցին գյուղատնտեսությունը, բարձրացրին մարզի բնակչության կենսամակարդակը, աշխուժացրին նրա մշակութային կյանքը և այլն: Մասնավորապես, խոսելով երրորդ հնգամյակի տարիներին Արցախում արդյունաբերության վերելքի մասին, հեղինակը գրում է, որ «1940 թ. մարզի տեղական արդյունաբերական ձեռնարկությունները 1930 թ. մակարդակը գերազանցեցին 11 անգամ» (էջ 48): Գյուղատնտեսության զարգացմանն անդրադառնալով՝ նա ընդգծում է, որ «1941 թ. հունվարի 1-ի դրությամբ բոլոր տեսակի անասունների գլխաքանակը հասնում էր 300.2 հազարի, որի 52 տոկոսը պատկանում էր կոլտնտեսություններին և պետտնտեսություններին: Այդ նույն ժամանակաշրջանում մարզի կոլտնտեսությունների ամբողջ ֆոնդերը կազմում էին 800 հազար ռուբլի» (էջ 76):

Երկրորդ գլխում Հ. Աբրահամյանը լուսաբանում է Հայրենական մեծ պատերազմում արցախցիների մեծ ներդրումը, նկատելով, որ «Երկրորդ աշխարհամարտին Լեռնային Ղարաբաղից (ներառյալ՝ Հյուսիսային Արցախը) մասնակցել է մոտ 90 հազար մարդ, որոնցից 40 հազարը զոհվել է, 31-ը արժանացել է հերոսի կոչման, 30 հազարը՝ մարտական շքանշանների ու մեդալների: Պատերազմում երեք արցախահայի շնորհվեց մարշալի, մեկին՝ ծովակալի, 26-ին՝ գեներալի կոչումներ (էջ 115-116)»: Հեղինակը, շրջանառության մեջ դնելով մինչ այժմ անհայտ բազմաթիվ փաստեր, ցույց է տվել, որ ընդհանուր առմամբ ԼՂՀ բնակչությունը պատերազմի տարիներին Պաշտպանության ֆոնդ է մուծել 42 մլն ռուբլի, ռազմաճակատ է ուղարկել 48000 անձնական և կոլեկտիվ ծանրոցներ, մոտ 8000 կտոր տաք հագուստ, 7620 լիտր օղի և սպիրտ: Կարմիր բանակի ֆոնդ է մուծել շուրջ 2,7 կգ ոսկի, 32 կգ արծաթ, պետությանն է հանձնվել ավելի քան 473 տ սև և 24 տ գունավոր մետաղ, մեծ թվով անասուններ և այլն: Պատերազմի տարիներին մարզում

կառուցվել են 14 նոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք հիմնականում սպասարկում էին ռազմաճակատին (էջ 136):

Գրքի երրորդ գլխում, որը վերնագրված է «Լեռնային Ղարաբաղը հետպատերազմյան տարիներին (1946-1985 թթ.)», ցույց են տրվել մարզում արդյունաբերության հետագա զարգացման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, գյուղատնտեսության մեջ կատարված տեղաշարժերը, լուսաբանվել է Արցախի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքը: Հ. Աբրահամյանը վկայակոչում է 1940-1975 թթ. ԼՂԻՄ-ի արդյունաբերության աճի ցուցանիշները և ընդգծում այդ ոլորտի առաջատար ճյուղերի՝ մետաքսագործության, գինեգործության և գորգագործության զարգացումը: Նա միաժամանակ առանձնացնում է մարզի տեղական արդյունաբերության՝ շինանյութերի արտադրության, անտառամշակության և փայտամշակության աճը: Ընդհանուր առմամբ, հետպատերազմյան տարիներին մարզի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների թիվը հասնում էր 12000-ի (էջ 157): Հետպատերազմյան տարիներին մարզի գյուղատնտեսության մեջ, որպես առաջատար ճյուղեր, առանձնանում են ծխախոտագործությունը և խաղողագործությունը, բամբակի արտադրությունը, թթենու մշակումը, շերամապահությունը և այլն: Հ. Աբրահամյանը նշում է, որ «մարզում խաղողի արտադրության բարձրացման շնորհիվ զգալիորեն աճել են մարզի եկամուտները: Եվ դա հնարավորություն տվեց, սկսած 1970-ական թթ. սկզբից, մարզի բյուջեն ապահովել առանց պետական միջոցներից դոտացիա ստանալու»(էջ185):

Վերլուծելով հետպատերազմյան տարիներին Լեռնային Ղարաբաղի հասարակական-քաղաքական կյանքը՝ հեղինակը բացահայտում է ազերիների իրականացրած արցախահայության բռնաճնշումները, կամայականություններն ու մարդու իրավունքների ոտնահարումը: Դրանք իրականացվում էին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի ղեկավարների՝ Բաղիրովի ու նրա գործը շարունակողների և, հատկապես, Հեյդար Ալիևի ու նրանց կամակատարների՝ հանձինս մարզի կուսակցական ու պետական մարմինների առաջին դեմքերի՝ Ն. Շահնազարովի, Բ. Կևորկովի և նրանց նմանների միջոցով: Նրանց հիմնական նպատակը, ինչպես այս գլխում ևս համապատասխան փաստերով ապացուցում է հեղինակը, Արցախը հայաթափելով ադրբեջանականացնելն էր: Ընդհանրացնելով մարզի արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ և հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում կատարված տեղաշարժերը՝ Հ. Աբրահամյանն ընդգծում է, որ դա արցախցու արարող մտքի ու զորեղ բազկի շնորհիվ է իրականացվել, այն էլ պաշտոնական Բաքվի բիրտ քաղաքականության պայմաններում:

Գրախոսվող աշխատության «Ամփոփում» բաժնում Հ. Աբրահամյանն արխիվային փաստաթղթերից քաղված տվյալներով ցույց է տալիս քննվող ժամանակահատվածում Արցախի հասարակական կյանքի բոլոր ոլորտների անմխիթար պատկերը՝ բացահայտելով պետական մակարդակով վարվող ադրբեջանական քաղաքականության ամբողջ հայատեցությունը: Ազգային-ազատագրական պայքարի նախօրյակին Արցախի նման իրավիճակը հեղինակին թույլ է տվել եզրակացնելու, որ դա էր արցախահայության գոյամարտի հիմնական պատճառը:

Իր ամբողջության մեջ շահեկան լինելով հանդերձ՝ գրախոսվող գիրքը զերծ չէ որոշ թերություններից: Չնայած ընդհանուր առմամբ սահուն հայերենով շարադրված լինելուն՝ նրանում սպրդել են լեզվաոճական ու սրբագրական բնույթի մեղանչումներ: Գիրքը կշահեր, եթե հեղինակն ավելի մեծ տեղ հատկացներ

Արցախի մշակութային կյանքի լուսաբանմանը: Ցավոք, ԼՂՀ պետական արխիվը հրետակոծության հետևանքով հրդեհվելու պատճառով Արցախի հետպատերազմյան շրջանի պատմությունը գերազանցապես շարադրվել է մամուլի նյութերի հիման վրա, ինչը հեղինակին հնարավորություն չի տվել ավելի համապարփակ ներկայացնելու նյութը:

Նշված թերություններով հանդերձ՝ Հ. Աբրահամյանի գրախոսվող աշխատությունը լուրջ ներդրում է Արցախի նորագույն պատմության բնագավառում:

ՄԻՆԱՍՅԱՆ Է.Գ.
Պատմական գիտությունների դոկտոր